

տունեաց շրջանին ալ դեռ Հայոց «շտեմարանը գեղեակը» են. «հօտք արօտականք ծաղկաւէտք խայտացեակը, ... դաշտք պարարտութեամբ լցեալ, ... հովիտք բազմացուցեալ ցորեան» (Յհ. կթղ. 326): Եւ ուրիշ մը զՀայաստան կը նկարագրէ՝ «աշխարհ... իբրեւ զդրախտ... կանաչագեղ, տերեւալից, պտղաբեր, գեղեցկաշուք եւ երջանիկ»: Հոն կը լսուէր «ձայն ուրախութեան ի կուլթս այգեաց» եւ «բարեբանութիւն առ կոխողս հնձանի» (Լաստ. 40), որոց յաջորդող ճաշերն ալ բնական էր որ պատարուն լինէին առատութեամբ ու ցնծութեամբ:

Այդ բարիքները սակայն ամէն աշխատաւորի եւ կամ արուեստաւորի տան մէջ չէին կրնար համախմբուիլ: Այլ ինչպէս այսօր, հին ժամանակ ալ կային ուտելու շատ նիւթոց հասարակաց հայթայթիչներ կամ վաճառորդներ, որոցմէ ժողովուրդը կը գնէր դրամով իւր պիտոյքը: Այսպէս կը յիշուին յատուկ «հացարարոցք» (Ա. Մնց. ԺԶ, 3) կամ «հասարակաց» հացագործներ (Եղիշ. 173): «Սպանդակոցք» (Ա. Կոր. Ժ, 25) կամ «մսավաճառանոցք» (Եզն. 284) եւ «մսագործք» (Վրդ. ի Հյկզ.): «Կրպակաւորք» գինւոյ (Ասող. 238) կամ «գինեկաւորք» (Սրգ. 825): Շրջուն «կադաւրա-